# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

**Սարչապետ համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ**

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| Սարչապետ | Ավագանու արտահերթ նիստ | 31.07.2020թ. | 11:00 | Սարչապետի համայնքապետարանի վարչական շենք, ավագանու նստավայր (ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, փ.1, շենք 67) |

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. հուլիսի 31-ին՝ ժամը 11.00-ին Սարչապետի համայնքապետարանի նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու արտահերթ նիստի

**գ.Սարչապետ** **30.07.2020թ.**

1. Սարչապետ համայնքի վարչական սահմաններում գտնվող, սակայն որպես <<անհայտ>> քաղաքացու սեփականություն փոխանցված հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)

2. Սարչապետ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը աճուրդային եղանակով օտարելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)

3. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)

4. Սարչապետ համայնքում պետության և համայնքային սեփականության հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին (Զեկ. Ա.Մարտիրոսյան)

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)

# ՆԱԽԱԳԻԾ

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 31-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *Բորիս Բարոյան*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Հաստատել Սարչապետ համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 31-ի թիվ 09 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը ՝

1) Սարչապետ համայնքի վարչական սահմաններում գտնվող, սակայն որպես <<անհայտ>> քաղաքացու սեփականություն փոխանցված հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)

2) Սարչապետ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը աճուրդային եղանակով օտարելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)

3) Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)

4) Սարչապետ համայնքում պետության և համայնքային սեփականության հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին(Զեկ. Ա.Մարտիրոսյան)

5) Հայաստանի Հանրապեության Լոռու մարզի Սարչապետ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրելու մասին:(Զեկ. Ա.Մարտիրոսյան)

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

# ՆԱԽԱԳԻԾ

---

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ՍԱԿԱՅՆ ՈՐՊԵՍ
<<ԱՆՀԱՅՏ>> ՔԱՂԱՔԱՑՈՒ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

---

/Զեկ. *ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 01-ի N-186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով <<Գուգարաց աշխարհ>> ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագիծը՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1.Ճանաչել Սարչապետ համայնքի սեփականության իրավունքը 06-092-0003-0020 ծածկագրից 0.55249 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի նկատմամբ՝ համաձայն <<Գուգարաց աշխարհ>> ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագծի:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանմունքում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

# ՆԱԽԱԳԻԾ

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ
ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը օտարել աճուրդային եղանակով՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Նախագիծ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի ավագանու
2020 թվականի -ի N -Ա որոշման

**ՑՈՒՑԱԿ**

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ**

| Հ/Հ | Գտնվելու վայրը | Հողամասի ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | Մեկնարկային գին կադաստրային արժեքի %-ը | Մեկնարկային գին /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սարչապետ համայնք, բնակավայր Պրիվոլնոյե | 06-092-0564-0005 | 1600.5 | բնակավայրերի | Այլ հողեր | 100 | 230472 |

**Աշխատակազմի քարտուղար՝** **Անժելա Մարտիրոսյան**

# ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ
ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

<<Տեղական ինքնակառավարման մաhսին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի կամավոր խնդիրները դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 08-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

***ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

1. Բարելավել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

**Նախագիծ**

**Հավելված**

**ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի ավագանու**

**2020 թվականի             -ի N  -Ա որոշման**

**ՑՈՒՑԱԿ ՀՀ  ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ**

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ**

1. Գևորգյան Կարինե Գուրգենի (բնակավայր Ապավեն)-40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ (սոց. օգնություն),
2. Մանուկյան Գևորգ Հայկազի (բնակավայր Պրիվոլնոյե)-80 000 (ութսուն հազար) ՀՀ դրամ (սոց. օգնություն),
3. Մանուկյան Մարինե Ժիրայրի (բնակավայր Սարչապետ)-30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ (սոց. օգնություն),

**Ընդամենը՝ 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:**

ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

____________________ ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

**ՆԱԽԱԳԻԾ**

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

1. Սարչապետ համայնքում պետության և համայնքային սեփականության պատկանող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով, մրցույթների կազմակերպման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.

1) Բորիս Բարոյան՝ համայնքի ղեկավար-հանձնաժողովի նախագահ,

2) Վոլոդիա Հազոյան՝ համայնքի ղեկավարի օգնական-հանձնաժողովի նախագահի տեղակալ,

3) Անժելա Մարտիրոսյան՝ աշխատակազմի քարտուղար- հանձնաժողովի անդամ,

4) Զավեն Մխոյան՝ ավագանու անդամ- հանձնաժողովի անդամ,

5) Էմիլ Գրիգորյան՝Պրիվոլնոյեի վարչական ղեկավար-հանձնաժողովի անդամ:

2. Համայնքի ղեկավար Բորիս Բարոյանին նշանակել աճուրդավար, աշխատակազմի քարտուղար Անժելա Մարտիրոսյանին՝ արձանագրող:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

# ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48-րդ, 76-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշումով հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. Տալ համաձայնություն Սարչապետ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրելու համար՝ համաձայն հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի ավագանու

2020թ. հուլիսի –ի N -Ա որոշման

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի սեփականությանը պատկանող հողամասերը մրցույթով, վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրվող հողամասի մեկնարկային վարձավճարի չափն ու պայմանները***

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի ծածկագիրը | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը | Հողամասի չափը (հա) | Օգտագործման տրամադրման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտներ) առկայությունը | Վարձակալության ժամկետը (տարի) | Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սարչապետ համայնք | 06-100-0138-0140 | Գյուղատնտեսական | արոտ | 3 | գյուղատնտեսական գործունեություն ծավալելու | Առկա չէ | 5 | 30000 |
| | | | | | | | | | |

**Աշխատակազմի քարտուղար՝** **Անժել Ամիրխանյան**